

Նարեն անգլերեն է սովորում

Փոքրիկ Նարեն դեռ դպրոց չի գնում, բայց արդեն անգլերեն է սովորում: Նրա կարծիքով, անգլերեն բառերը այդքան էլ գեղեցիկ չեն: Նա գտնում է, որ շատ ավելի սիրուն կլինեն, եթե յուրաքանչյուր բաղաձայնից հետո ճիշտ մեկ ձայնավոր լիներ և ամեն ձայնավորից հետո ճիշտ մեկ բաղաձայն:

Պահանջվում է գրել ծրագիր, որը ներառում է մինչև 100 երկարության անգլերեն փոքրատառերից կազմված տող, և հաշվում է, թե ամենաքիչը քանի տառ է պետք փոխել, որպեսզի ստացվի մեկումեջ բաղաձայն և ձայնավոր: Ձայնավոր համարվում են հետյալ տառերը. 'a', 'e', 'i', 'o', 'u' և 'y':

Մուտքային տվյալներ

Տրված է մեկ տող՝ s ($1 \leq |s| \leq 100$): ($|s|$ -ը տողի երկարությունն է)

Ելքային տվյալներ

Պետք է արտածել նվազագույն տառերի քանակը, որոնք անհրաժեշտ է փոխարինել:

Օրինակներ

Մուտք	Ելք
aa	1
abacaba	0
abrakadabra	4